ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____ Ռ. Սարգսյան
«26» 01. 2026թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է սահմանվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջում (այսուհետ Քոլեջ) ուսումնական, հետազոտական և ստեղծագործական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսանողների, դասախոսների, վարչական անձնակազմի) վարքագծի հիմնարար չափանիշները:

1.2. Կանոնակարգի նպատակն է ձևավորել **ակադեմիական ազնվության** վրա հիմնված միջավայր, կանխարգելել գիտական ու կրթական զեղծարարությունը և ապահովել ստացված արդյունքների հավաստիությունը:

1.3. Ակադեմիական ազնվությունը հիմնված է արդարության, վստահության, պատասխանատվության և հարգանքի, ազնվության սկզբունքների վրա:

- **Արդարություն:** Ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների նկատմամբ անկողմնակալ վերաբերմունքի դրսևորում և գիտելիքների օբյեկտիվ գնահատում:
- **Վստահություն:** Փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծում, որտեղ աշխատանքների ինքնուրույնությունն ու աղբյուրների հավաստիությունը կասկածի տակ չեն դրվում առանց հիմնավոր պատճառի:
- **Պատասխանատվություն:** Յուրաքանչյուր անհատի պարտավորությունը՝ կրելու պատասխանատվություն սեփական գործողությունների, հետազոտությունների որակի և վարքագծի կանոնների պահպանման համար:
- **Հարգանք:** Հարգանք գաղափարների հեղինակների, մտավոր սեփականության, գործընկերների և կրթական հաստատության կողմից սահմանված չափանիշների նկատմամբ:
- **Ազնվություն:** Բացառել ցանկացած տեսակի խարդախություն, արտագրություն, գրագողություն (պլագիատ) կամ տվյալների կեղծում:

1.4. Սույն կարգը կարող է վերանայվել, կամ փոփոխվել քոլեջի Տնօրինական խորհրդի կողմից, վավերացնում է Քոլեջի տնօրենը:

2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ակադեմիական անազնվություն է համարվում ցանկացած գործողություն կամ գործողության փորձ, որը կարող է հանգեցնել ուսումնական կամ հետազոտական արդյունքների անարդարացի ձեռքբերմանը կամ կեղծմանը:

2.1. Հիմնական տեսակներն են.

- **Գրագողություն (Պլագիատ):** Այլ հեղինակի մտքերի, բառերի, տվյալների կամ արդյունքների օգտագործումը որպես սեփական՝ առանց պատշաճ հղում կատարելու բնօրինակ աղբյուրին: Առանց չակերտների կիրառման այլ տեքստի բառացի պատճենումը (նույնիսկ հղման առկայության դեպքում):
- **Ինքնագրագողություն:** Նախկինում հանձնած սեփական աշխատանքի կամ դրա զգալի մասի ներկայացումը որպես նոր արդյունք՝ առանց դասախոսի թույլտվության:
- **Կեղծարարություն և մանիպուլյացիա:** Հետազոտական տվյալների, փորձերի

արդյունքների կամ վիճակագրության հնարում կամ կանխամտածված փոփոխում: Պաշտոնական փաստաթղթերի (տեղեկանքներ, գնահատականների մատյաններ, ստուգման թերթիկներ) կեղծում կամ դրանցում փոփոխությունների կատարում:

- **Արտագրություն և օժանդակություն:** Քննությունների կամ ստուգարքների ժամանակ չթույլատրված նյութերի, սարքավորումների կամ այլ անձանց օգնության օգտագործումը:
  - Ակադեմիական աշխատանքի պատվիրումը կամ գնումը երրորդ անձանցից (ներառյալ՝ արհեստական բանականության գործիքների չարաշահումը, եթե դա արգելված է տվյալ առաջադրանքի համար):
  - Սեփական աշխատանքը այլ ուսանողի տրամադրումը՝ վերջինիս կողմից որպես սեփական ներկայացնելու նպատակով:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԹԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է հետազոտական աշխատանքը (ռեֆերատ, կուրսային կամ ավարտական աշխատանք) կատարել ինքնուրույն:

3.2. Տեքստում օգտագործված բոլոր մեջբերումները պետք է ուղեկցվեն համապատասխան հղումներով՝ ըստ սահմանված կարգի (ուղղանկյուն փակագծերում):

3.3. Գրականության ցանկում պետք է ներառվեն միայն այն աղբյուրները, որոնք իրականում օգտագործվել են աշխատանքը շարադրելիս:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.1. Խախտման փաստը հաստատվելու դեպքում Քոլեջը կիրառում է հետևյալ տույժերը՝ կախված խախտման ծանրության աստիճանից և պարբերականությունից.

1. **Նախազգուշացում.** Գրավոր կամ բանավոր նախազգուշացում՝ խախտումը վերացնելու պահանջով:
2. **Ակադեմիական տույժ.** Տվյալ առաջադրանքի կամ քննության գնահատականի նվազեցում կամ «0» միավորի նշանակում՝ առանց վերահանձնման իրավունքի:
3. **Կարգապահական տույժ.** Նկատողություն կամ խիստ նկատողություն, որը գրանցվում է ուսանողի անձնական գործում:
4. **Ծայրահեղ միջոց.** Ուսանողի հեռացում Քոլեջից կամ դասախոսի դեպքում՝ աշխատանքային պայմանագրի լուծում (կոպիտ կամ կրկնվող խախտումների դեպքում):

5. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Յուրաքանչյուր ուսանող կամ դասախոս իրավունք ունի բողոքարկել իր նկատմամբ կայացված որոշումը, եթե համաձայն չէ դրա հիմնավորվածության հետ:

5.1. Բողոքարկման գործընթացը.

- **Դիմումի ներկայացում.** Որոշման մասին տեղեկացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ անձը կարող է գրավոր բողոք ներկայացնել Քոլեջի տնօրենին:
- **Վերանայում.** Տնօրենը կարող է հարցը վերադարձնել Հանձնաժողովին՝ նոր հանգամանքների լույսի ներքո վերանայման, կամ ձևավորել անկախ փորձագիտական խումբ:

- **Վերջնական որոշում.** Բողոքարկման արդյունքում կայացված որոշումը համարվում է վերջնական և ենթակա չէ հետագա վերանայման Քոլեջի շրջանակներում:

5.2. Գաղտնիություն և պաշտպանվածություն

- Բոլոր քննարկումները կրում են գաղտնի բնույթ՝ կողմերի հեղինակությունը չվնասելու համար:
- Քոլեջը երաշխավորում է, որ խախտման մասին բարեխղճորեն հայտնած անձը (ազդարարը) չի ենթարկվի որևէ ճնշման կամ հետապնդման:

6. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանմանը հետևելու և խախտումները քննելու նպատակով Քոլեջում կարող է ձևավորվել **Ակադեմիական ազնվության հանձնաժողով** (այսուհետ՝ Հանձնաժողով):

6.1. Կազմը և ձևավորումը

- Հանձնաժողովը ձևավորվում է Քոլեջի տնօրենի հրամանով՝ ուսումնական տարվա սկզբին:
- Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են.
  - Ուսումնական գծով փոխտնօրենը (որպես նախագահ),
  - Ամբիոնների կամ մեթոդական միավորումների ներկայացուցիչներ,
  - Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ (ապահովելու համար ուսանողների շահերի պաշտպանությունը):
- Հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով տվյալ գործով ունի շահերի բախում (օրինակ՝ տվյալ ուսանողի դասախոսն է կամ ազգակիցը):

6.2. Գործառույթները

- Քննարկել ակադեմիական անազնվության վերաբերյալ ստացված բողոքները կամ զեկուցագրերը:
- Լսել կողմերի փաստարկները և իրականացնել փաստահավաք գործունեություն:
- Կայացնել որոշում խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ և առաջարկել համապատասխան տույժի միջոցը:

Հավելված 1

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ _____-ս,
(ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն)

հաստատում եմ, որ «_____»
(աշխատանքի թեման)

թեմայով իմ կողմից ներկայացված ▫ **ռեֆերատը** / ▫ **կուրսային աշխատանքը** / ▫ **ավարտական աշխատանքը** հանդիսանում է իմ ինքնուրույն հետազոտության արդյունքը:

Սույնով հայտարարում և հավաստիացնում եմ, որ.

- Աշխատանքում օգտագործված բոլոր մեջբերումները, տվյալները և մտքերը ուղեկցվում են պատշաճ հղումներով՝ համաձայն Քոլեջում սահմանված տեխնիկական պահանջների:
- Օգտագործված գրականության ցանկում ներառված են բոլոր այն աղբյուրները, որոնցից ես փաստացի օգտվել եմ:
- Աշխատանքը չի պարունակում գրագողության (պլագիատ) որևէ դրսևորում և նախկինում չի ներկայացվել գնահատման այլ դասընթացների շրջանակներում:
- Գիտակցում եմ, որ ակադեմիական ազնվության կանոնների խախտման կամ գրագողության հայտնաբերման դեպքում իմ աշխատանքը կգնահատվի «անբավարար»:

Ուսանողի ստորագրություն՝ _____

Ամսաթիվ՝ «____» _____ 202__ թ.